

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲԱՅՐՈՆԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ

Ջորջ Գորդոն Բայրոնի (1788-1824) հարուստ նամականին գրական այն հուշարձաններից է, որոնք հնարավորություն են ընձեռում խորամուխ լինելու բանաստեղծի անձնական կյանքի և ստեղծագործության ամենամիտրական գաղտնարանների մեջ, հետևելու նրա հասարակական, քաղաքական, գեղագիտական, փիլիսոփայական ու գրական հայացքների ձևավորման ու զարգացման ընթացքին, բազմաթիվ հավաստի տեղեկություններ քաղելու իր ժամանակաշրջանի պատմական ու մշակութային կյանքի վերաբերյալ: Բայրոնի նամականու մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև հայերին ու հայ մշակույթին վերաբերող էջերը: Դրանց մեջ արտացոլված է այն թերմ սերն ու հարգանքը, որ տածել է հանճարեղ բանաստեղծը դեպի հայ ժողովուրդն ու նրա հարուստ մշակույթը: Հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող նամակները (թվով՝ տասնչորս)՝ ուղղված անգլիացի բանաստեղծ, Բայրոնի առաջին կենսագիր Թոմաս Մուրին (1779—1852) և հրատարակիչ Ջոն Մըրրեին (1778—1843), գրվել են 1816—1821 թթ.: Դրանք պատմական արժեքավոր փաստաթղթեր են և վառ ապացույց այն մեծ դերի, որ խաղացել է Բայրոնը հայ մշակույթը օտարներին ներկայացնելու գործում: Հայ մատենագրությունից նրա կատարած բազմաթիվ թարգմանությունները (հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից», Կիլիկյան Հայաստանի մատենագիր ու հրապարակախոս Ներսես Լամբրոնացու «Ատենաբանությունից», ս. Պողոսի և կորնթացիների նամակագրությունը, որի բնագիրը չի պահպանվել, իսկ թարգմանությունը այդ ժամանակ գոյություն է ունեցել միայն հայ մատենագրության մեջ, և առաջին անգամ անգլերեն է թարգմանել Բայրոնը), անմիջական մասնակցությունը անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն քերականությունների և անգլերեն-հայերեն, բառարանի պատրաստման ու հրատարակման գործին հավաստում են Բայրոնի արտակարգ հետաքրքրությունը դեպի հայ մշակույթը:

Արդեն ճանաչում ստացած բանաստեղծը, որ իր հանդուգն էպիգրամների ու պառլամենտական ելույթների համար հալածանքների ու վիրավորանքի էր ենթարկվում, 1816 թ. ապրիլի 25-ին հեռանում է Անգլիայից, այլևս չվերադառնալու որոշմամբ: Նույն թվականի աշնանը նա հաստատվում է Վենետիկում և ծանոթանում Մխիթարյանների հետ: Բայրոնի նամակների միջոցով անգլիախոս ընթերցողը առաջին անգամ տեղեկանում է դեռևս XVIII դ. սկզբներից ողջ ըվրոպայում մեծ համբավ ու հռչակ վայելած հայագիտական խոշոր կենտրոնի՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության, գիտական ու լուսավորչական աշխատանքին և գաղափար կազմում նրա այնպիսի կարկառուն դեմքերի մասին, ինչպիսիք են Հարություն Ավգերյանը (1774—1854), Ազոնց Գյուլբերը (1740—1824), Սարգիս Թեոդորյանը (1783—1877), Սուբիաս Սոմալյանը (1776—1846) և ուրիշներ:

XVIII դ. սկզբներին, երբ հայերը տառապում էին մի կողմից սուլթանական Թուրքիայի, իսկ մյուս կողմից շահական Պարսկաստանի լծի տակ, Վենետիկից ոչ հեռու գտնվող ս. Ղազար փոքրիկ կղզին թերևս միակ վայրն էր աշխարհում, որտեղ ազատ ու անկաշկանդ հնչում էր հայոց լեզուն և հանգամանորեն ուսումնասիրվում հայ հինավուրց մշակույթն ու գրականությունը: Հայրենիքից հեռու գտնվող այդ գողտրիկ կղզյակի ս. Ղազար մայրավանքում եվրոպական քաղաքակրթությունից հոգնած բանաստեղծը սկսում է ուսումնասիրել հայերեն՝ երազելով ներթափանցել արևելյան պոեզիայի գաղտնարան-

ները: «Կարևորը այն չէ, թե Բայրոնը որչափով է սովորել հայերենը: Կարևորը երևույթն է, այն ջերմ համակրանքը, որ նա տածել է մեր երկրի պատմության և գրականության հանդեպ, այն խանդավառ հափշտակությունը, որ նա ամեն օր Ագրիականի փոթորկոտ ջրերը ճեղքելով գնացել է հայոց կղզին, մի աղնիվ նպատակով համակված՝ սովորելու լեզուն»¹: Բայրոնը սկսում է կանոնավոր հաճախել ս. Ղազար կղզին և ուսումնասիրել հայոց լեզուն: Նրա հայերենի ուսուցիչը՝ 2. Ավդերյանը (Բայրոնը սիրում էր նրան հայր Պասկալ անվանել) մի ընդարձակ սրահ էր հատկացրել բանաստեղծի դասերի համար: Եվ հենց այդ սրահում, որը «շնչում էր արևելքով ու հնություն»², սկսվեցին նրա հայերենի դասերը:

1816 թ. դեկտեմբերի 4-ի՝ 2. Մըրրեին ուղղած նամակում Բայրոնը հայտնում է հայերենի իր ուսումնասիրությունների և այն բացառիկ արժեքավոր տեղեկությունների մասին, որ նա ստացել է հայ գրականության, հայ ժողովրդի բարքերի ու սովորությունների մասին: Նա հիացել է հայ վանական-գիտնականների կրթվածությամբ և ազգի լուսավորության համար կատարած խոշոր աշխատանքներով. «...սկսել և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնառությունը, որին տիրապետում եմ հնարավորություններիս սահմաններում: Ամեն օր գնում եմ հայկական վանք՝ դասեր առնելու մի գիտնական-վանականից և արդեն որոշ բացառիկ ու օգտակար տեղեկություններ եմ ձեռք բերել արևելյան այդ ժողովրդի գրականության ու սովորությունների մասին: Նրանք այստեղ իննսուն վանականից բաղկացած հաստատություն՝ եկեղեցի և միաբանություն ունեն: Նրանցից ոմանք շատ ուսյալ և կիրթ մարդիկ են: Ունեն նաև տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը՝ լուսավորելու համար»³:

Կյանքի այս նոր հանգամանքներն էլ բանաստեղծին պարզեցնում են նոր տպավորություններ, նոր հանդիպումներ ու մտերմություններ, նա կարողանում է փնտրել ու գտնել նոր իրողություններ իր անսահման հետաքրքրասիրությունը բավարարելու համար: Թ. Մուրին ուղղված 1816 թ. դեկտեմբերի 5-ի նամակում բանաստեղծը գրում է. «Իբրև հաճելի ժամանց, ամեն օր հայերեն եմ սովորում հայկական վանքում: Պարզվեց, որ միտքս պայծառացնելու համար ինձ հարկավոր է մի տաժանակիր աշխատանք: Սա ամենադժվարին աշխատանքն է, որ ես կարողացա գտնել այստեղ իբրև ժամանց՝ միտքս տանջահար անելու և կենտրոնանալու համար»⁴: 2. Ավդերյանը բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ է տվել Բայրոնին հայ ինքնուրույն և թարգմանական գրականության վերաբերյալ: Այդ մասին Բայրոնը հիշատակում է դեկտեմբերի 5-ի նամակում. «Վանքում կան մի շարք չափազանց հետաքրքիր ձեռագրեր, գրքեր, ինչպես նաև թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից, նաև պարսկերենից, ասորերենից և այլն, չհաշված իրենց ժողովրդի բնիկ երկերը»⁵: Այստեղ արժե նշել, որ Բայրոնի ստեղծագործությունների իտալական շրջանը (1816—1823) բնորոշվում է քնարական վառ և համարձակ նորարարությամբ («Մանֆրեդ», «Տասույի գանգատը», «Չալիկ Հարուդի ուխտագնացության» վերջին նվագը, «Սարդանապալ», «Կայեն» և այլն), միաժամանակ չի թուլանում բանաստեղծի հետաքրքրասիրությունը հայ գրականության և մշակույթի պատմության նկատմամբ: Կարդալով Բայրոնի նամակները, զգում ենք նրա հարգանքը հայոց լեզվի նկատմամբ, որը «...մի հարուստ լեզու է, և լիովին փոխհատուցվում են սովորողի շարժարանները»⁶:

1 Խ. Դաշտենց, Բայրոնը և հայերը, Երևան, 1959, էջ 174:

2 Ю. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, 1970, с. 395.

3 Th. Moore, The Life, Letters and Journals of Lord Byron, London. 1908, p. 333.

4 Նույն տեղում, էջ 329:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

1817 թ. Հ. Ավգերյանը և Բայրոնը միացյալ ջանքերով հրատարակում են անգլերեն-հայերեն քերականության ձեռնարկը: Բանաստեղծն իր ուսուցչին առաջարկում է գիրքը հրատարակել իր միջոցներով, հոգ է տանում, որ այն տարածում գտնի: Այդ մասին նա գրում է Անգլիայում գտնվող իր ընկերներին, հովնատով խոսում Ավգերյանի տաղանդի և գիտելիքների մասին, կրկին անգամ հիացական խոսքեր ասում Մխիթարյանների գործունեության վերաբերյալ. «Մեկ այլ ծրարով ուղարկում եմ Ձեզ մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականության հայերի օգտագործման համար, որի հրատարակմանը ես իրոք խթանել և աջակցել եմ (այն ինձ վրա նստեց ընդամենը հազար ֆրանկ՝ ֆրանսիական լիվր): Նրա այս քերականությունը (ես նկատի ունեմ այժմ տպագրվողը) պատրաստ լինի, չե՞ք առարկի արդյոք, վերցնել քառասուն կամ հիսուն ռոբլ, որոնք հինգ կամ տաս գինեյից ավելի չեն արժենա, և դրանց վաճառքով շարժել ուսյալների հետաքրքրությունը: Պատասխանե՛ք՝ այո կամ ոչ, ինչպես է՞նթամենաք: Կարող եմ վստահեցնել, որ նրանք (Մխիթարյանները— Ա. Բ.) ունեն մի շարք շատ հետաքրքիր գրքեր և ձեռագրեր, գլխավորապես թարգմանություններ՝ այժմ կորած հունարեն բնագրերից: Բացի այդ, նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասիր միաբանություն⁷: 1819 թ. Հ. Ավգերյանն ու Բայրոնը ձեռնամուխ են լինում հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի հրատարակմանը՝ անգլիախոս ուսանողության համար: Հ. Ավգերյանի խնդրանքով Բայրոնը մի առաջաբան է գրում, որտեղ խոսում է հայ ժողովրդի և նրա հոգևոր գանձերի մասին. «Երբ 1816 թ. ժամանեցի Վենետիկ, ես նույնպես, շատ ճանապարհորդների նման, խիստ տարված էի ս. Ղազար վանքի միաբանությամբ, որը միավորում է կղերական հաստատությունների բոլոր առավելությունները՝ առանց նրա մոլորություններից որևէ մեկի... Այս մարդիկ մի հարստահարված և բարձրատոհմ ազգի կրոնավորներ են, ազգ, որը հրեաների և հույների պես տարագիր ու ստրուկ է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտության: Այս ժողովուրդը հարստացել է առանց բանասիրության: Բայց նրա տեղը, այնուամենայնիվ, երկար ժամանակ եղել է «գերության տան» մեջ, որը վերջերս բազմապատկել է իր անթիվ օթեանները:

Թերևս դժվար լինի գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լինեն նրանց ճակատագիրը, որ դառն է եղել, ինչպիսին էլ լինի ապագայում, նրանց երկիրը հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և, թերևս նրանց լեզուն միայն ավելի խորր ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառնալու համար⁸: Բանաստեղծն առաջաբանը ավարտում է հետևյալ խոսքերով՝ «և՛ պարսից սատրապները, և՛ թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իսկ պատկերով⁹: Քաղաքական նկատառումներից ելնելով, Մխիթարյանները որոշում են չհրապարակել այդ առաջաբանը: Բայրոնի՝ ոչ մի հաշտության, զիջումի չգնացող խոռվահույզ հոգին ըմբոստացավ այս անգամ օբյեկտիվ պատճառների դեմ. բանաստեղծը վիրավորվեց և դադարեցրեց իր այցելությունները ս. Ղազար: Թուրքերի և պարսիկների հասցեին ասված սուր խոսքերի պատճառով վերոհիշյալ առաջաբանը դեռևս երկար ժամանակ մնաց անտիպ: Հետագայում Թ. Մուրը գտավ այն բանաստեղծի թղթերում և առաջին անգամ հրատարակեց 1830 թ. Լոնդոնում լույս ընծայված «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» գրքում¹⁰:

7 Նույն տեղում, էջ 335:

8 Նույն տեղում, էջ 337:

9 Նույն տեղում:

10 Տե՛ս Խ. Դաշտենց, նշվ. աշխ., էջ 28—31, 96—97, Վ. Փաթաթյան, Հայ-անգլիական գրական առնչությունները, Երևան, 1975, էջ 212:

Միայն դրանից հետո այդ առաջաբանը թարգմանվեց հայերեն և «Ի թզթոց լորտ Պայրենի» խորագրով տեղ գտավ Մխիթարյանների լույս ընծայած «Մաղկաքաղ քերթողաց անգղիացւոց» գրքում¹¹։ Այնուհետև այն բազմիցս զետեղվել է Մխիթարյանների հրատարակած տարբեր ժողովածուներում, արևելահայ և արևմտահայ պարբերականներում, տարեցույցներում և այլուր։

Բայրոնի նամակներից որոշակի տեղեկություններ ենք քաղում նաև XVIII—XIX դդ. Արևմտյան Եվրոպայում (հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում) հայագիտության զարգացման պատմության առանձին դրվագների վերաբերյալ։ Այսպես, 1817 թ. հունվարի 2-ի՝ 2. Մըրրեին ուղղված նամակում Բայրոնը հիշատակում է, որ «շատ տարիներ առաջ Վիստոնները» Անգլիայում հրատարակեցին «Հայոց պատմության» բնագիրը՝ իրենց կատարած լատիներեն թարգմանության հետ մեկտեղ¹²։ 1695 թ. Ամստերդամում հայ մատենագիր և հրատարակիչ Ղուկաս Վանանգեցին տպագրեց Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», որից հետո Եվրոպացի արևելագետները սկսեցին ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել հայ ազգի և նրա պատմության նկատմամբ։ «Մինչ այդ,— գրում է Լեոն,— հայ ազգը ներկայացել էր Եվրոպացուն կամ իբրև կրոնական մի համայնք, որ ուներ դավանական իր առանձնահատկությունները, կամ թե իբրև հմուտ և ճարպիկ և միևնույն ժամանակ տգետ վաճառական, որի ասածներին հավատ չէր ընծայվում։ Խորենացին, Ամստերդամում վերածնվելով, գնաց ցույց տալու արևմտյան աշխարհին, թե հայերը մի հին պատմական ազգ են, կարևոր դեր են կատարել Արևելքի քաղաքական աշխարհում, շփվելով Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի և Բյուզանդիայի հետ»¹³։ Եվ Եվրոպացի գիտնականներն իրենց ուսումնասիրությունների նյութ են դարձնում նաև հայ պատմահոր «Հայոց պատմությունը»։ Խորենացին աղբյուր է դառնում գերմանացի գիտնական 3. Երյոդերի (1680—1756) լեզվաբանական և պատմական ուսումնասիրությունների համար։ Նամակագրություն է սկսվում Ֆրանսիացի հայագետ Լա-Կրոդի (1661—1739) և Վիստոն եղբայրների միջև՝ դարձյալ Խորենացու առնչությամբ։ Եվ շնայած Լա-Կրոդի՝ Խորենացու վերաբերյալ թյուր կարծիքին (Լա-Կրոդը գտնում էր, որ Խորենացին ապրել և ստեղծագործել է IX—X դդ.), Վիստոն եղբայրները լատիներեն թարգմանեցին «Հայոց պատմությունը», ինչպես նաև Ա. Շիրակացու «Աշխարհացոյցը», և դրանք, հայերեն բնագրի հետ մեկտեղ, հրատարակեցին Կարլոս Ակբերս տպագրիչի մոտ։ Մ. Խորենացու երկի թարգմանությունը, որ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, հայոց պատմագիտական կոթողների առաջին թարգմանությունն է Եվրոպայում, Եվրոպական բանասիրության միտքը հրավիրում է հայոց պատմության և մատենագրության վրա։

Այս առումով արժե նշել, որ հայերը Խորենացու շնորհիվ նույնպես տեղ գրավեցին անգլիացի գիտնական էդուարդ Գիբոնի (1737—1794)՝ XVIII դ. վերջերին գրած «Հռոմեական կայսրության անկման և կործանման պատմությունը»¹⁴ հանրահայտ պատմական աշխատության մեջ։ Այս աշխատությունը, որն իր արժանի տեղն էր գրավում Բայրոնի անձնական գրադարանում, իր կենդանի շարադրանքով և սկզբնաղբյուրների մշակման որակով համարվում է XVIII դ. երկրորդ կեսի լավագույն պատմական աշխատությունը, որը թարգմանվել է գրեթե բոլոր Եվրոպական լեզուներով¹⁵։ Իր հեռավոր բարեկամ, գրող

¹¹ «Մաղկաքաղ քերթողաց անգղիացւոց», Վենետիկ, 1852, էջ V—VII։

* Ջորջ և Վիլյամ Վիստոնների հայրը՝ Վիլյամ Վիստոնը հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Աղափիրյանի որդիների ուսուցիչն է եղել։ Նա Հնդկաստանում սովորել է հայերեն և, վերադառնալով Լոնդոն, այն սովորեցրել իր որդիներին։ Վիստոն եղբայրները ինքնուսուցմամբ այնքան են խորացել հայերենի մեջ, որ սկսել են հայերեն աշխատություններ թարգմանել։

¹² Th. Moore, նշվ. աշխ., էջ 336։

¹³ Լեոն, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 466։

¹⁴ Э. Гиббон, История упадка и разрушения Римской империи, СПб., 1883.

* Հնդահանապես Բայրոնի անձնական գրադարանը պարունակում էր արևելագետ հայտնի

Ռորերտ Դալլասին (1754—1824) ուղղված 1808 թ. հունվարի 21-ի նամակում Բայրոնը գրում է. «Ինչ վերաբերում է ընթերցանությանը, ես առանց չափազանցելու կարող եմ ասել, որ պատմության բնագավառում կարդացել եմ բավական շատ: Քիչ կգտնվեն ժողովուրդներ, որոնց պատմությանը ես մի քիչ ծանոթ լինեմ»¹⁵: Այս տողերը վկայում են այն մասին, որ Բայրոնը հայ ժողովրդին և նրա պատմությանը ծանոթ է եղել առնվազն 1807 թ., քանի որ այդ թվականին հրատարակված Գիբոնի վերահիշյալ աշխատությունը բանաստեղծի անձնական գրադարանում էր: Գիբոնի գրքում Բյուզանդիայի նկարագրությունը ուժեղացրեց Բայրոնի համերկացրելու ուշադրությունը Արևելքի նկատմամբ:

Բայրոնի «Հայկական» նամականին խոսում է նաև այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերել են օտարազգի գիտնականները հայոց լեզվի նկատմամբ: Այսպես, դեկտեմբերի 5-ի նամակից տեղեկանում ենք, որ դրանից «չորս տարի առաջ ֆրանսիացիները հիմնեցին մի հայկական ամբիոն: Նրկուշաթի առավոտյան ներկայացան քսան աշակերտ՝ լի ազնիվ եռանդով, սրտաբաց երիտասարդությամբ և անզուգական աշխատասիրությամբ: Նրանք իրենց ազգին և աշխարհակալ հաղթությանն արժանի քաջությամբ դիմացան մինչև հինգշաբթի: Այնուհետև, այբուբենի քսանվեցերորդ տառի վրա, նրանցից տասնհինգը ուժասպառ եզան»¹⁶: Խոսքը 1812 թ. փետրվարի 15-ին Նապոլեոն Բոնապարտի հատուկ հրովարտակով Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ամբիոն հիմնելու մասին է: Դեռևս 1798 թ. դեկտեմբերի 11-ին Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում, նրա հիմնադրումից (1795 թ.) երեք տարի անց, պարսկերենից, արաբերենից և թուրքերենից անմիջապես հետո, հիմնվել էր հայոց լեզվի ամբիոն՝ Ֆրանսիա ժամանած հայ լեզվաբան Հակոբ Շահան-Ջրպետյանի ղեկավարությամբ, որը 1798 թ. հաստատվել էր Փարիզում, անձնական ծանոթություն ունենալով Նապոլեոն Բոնապարտի հետ: 1801 թ. Շահան-Ջրպետյանը հրաժարվեց Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայոց լեզվի ուսուցչի իր պաշտոնից, պատճառաբանելով, որ ֆրանսիերենի և ֆրանսիական դրականության իր ոչ բավարար իմացությունը չի կարող լրիվ գոհացնել աշակերտներին, քանի որ այն հնարավորություն չի տալիս հայոց լեզուն մատչելիորեն մատուցել նրանց: Հետագա տարիներին Շահան-Ջրպետյանը խորապես ուսումնասիրեց ֆրանսիերենը և 1812 թ. վերստին սկսեց ղեկավարել հայոց լեզվի ամբիոնը: 1815 թ. գրած իր նամակներից մեկում Շահան-Ջրպետյանը նշում է. «Դպրատուն մեր հաստատեալ է միանգամայն վասն Հայոց, Գաղղիացուց եւ այլ ամենայն ազգաց. զի բազումք յօտար յաշխարհաց եւս, արք երեւելիք, գիտնական արք, քառասնամեայ եւ անելի եւս, գան աստ ս:ռ ՚ի յուսանել, զի լեզու մեր է մին ի հնագույն ի սուրբ եւ ի մայր լեզուաց, մինչեւ զարմացուցանէ զգիտունս թէ քանի հնագիտութիւնս զվաղեմի պատմութեանց եւ զժագմանէ աղգաց՝ քաղեալ անսգիտ տեղեկութիւնս զվաղեմի պատմութեանց եւ զժագմանէ աղգաց՝ քաղեալ քտանեն իբրեւ անփորձ հանք կամ անտաշ գոհար»¹⁷: Ուրեմն, հայոց լեզվի

ճանապարհորդների գրքերը, որոնք նա կարդում էր մեծ հետաքրքրությամբ ու ուշադրությամբ և հետագայում բազմիցս բանավեճերի մեջ մտնում դրանց հեղինակների հետ («Զայլդ Հարուդի ուխտագնացության» առաջին և երկրորդ նվաղների, ինչպես նաև «Արևելյան պոեմների» վերաբերյալ տված իր ծանոթագրություններում): Բանաստեղծի հետաքրքրությունը նմանատիպ գրականության հանդեպ չի նվազել նրա ողջ կյանքի ընթացքում: Բայրոնը հնարավորություն ուներ արևելյան երկրների մասին իրեն հետաքրքրող տեղեկությունները քաղել այն ժամանակվա պարբերական մամուլից, որտեղ տեղ էին գտնում ինչպես Շահան-Ջրպետյանի նկարագրություններ, գրականություն և արվեստի տեսություններ, այնպես էլ արևելյան պոեզիայի և արձակի նմուշներ:

¹⁵ «Byron's Letters and Journals», ed. by Leslie A. Marchand, Cambridge, 1974, p. 147—148.

¹⁶ Th. Moore, նշվ. աշխ., էջ 329:

¹⁷ Ա. Աբրահամյան, Շար հայ կենսագրութեանց, Կ. Պոլիս, 1893, էջ 37:

ամբիոնը կազմակերպվել է ոչ միայն ֆրանսիացիների, այլև բոլոր ազգերի՝ համար: Դպրոց են սկսել հաճախել տարբեր երկրներից, որոնց թվում եղել են նույնիսկ քառասունն անց գիտնականներ: Եկել են ուսումնասիրելու մի լեզու, որը հնագույնն է մայր լեզուների մեջ: Ուսումնասիրելով հայոց լեզուն իբրև մի «թանկարժեք քար», նրանք հազվագյուտ և եզակի տեղեկություններ են քաղել ազգերի ծագման և հին պատմության վերաբերյալ:

1812 թ. Շահան-Ջրպեայանին հաջողվում է բավական թվով աշակերտներ հավաքել իր շուրջը: Նա իր դասավանդումը սկսեց քսան աշակերտով, որոնցից հինգը միայն կարողացան ավարտել ուսումը: Դրանցից երեքը հետագայում դարձան անվանի հայագետներ (Ժ. Ա. Սեն-Մարտեն, Վ. Ֆլորիվալ և Մ. Բելլո), որոնք ինչպես ֆրանսիական, այնպես էլ եվրոպական հայագիտության զարգացման մեջ նշանակալից դեր են խաղացել և հայագիտական ուսումնասիրությունների հսկայական ժառանգություն թողել: Հենց այս ֆրանսիացի հայագետներին ի նկատի ունենալով, երբ 1817 թ. հունվարի 2-ի նամակում՝ հասցեագրված Ջ. Մըրրեին, գովեստով խոսելով Մխիթարյանների մասին, նշում է. «Նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասեր միաբանություն, և դեռ Բոնապարտի օրոք ֆրանսիացի մի քանի գիտնականներ մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նրանց լեզվի ուսումնասիրությանը»¹⁸:

Բայրոնի նամականին բացառիկ կարևոր նշանակություն ունի, քանի որ այն իր տեսակի մեջ միակն է նորության և արժանահավատության առումով, պարունակում է հավաստի տեղեկություններ ու փաստեր, ինչպես Մխիթարյանների գիտական և լուսավորչական գործունեության, այնպես էլ Բայրոնի ու եվրոպացի մյուս արևելագետների հայագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ և թույլ է տալիս ավելի խորը բացահայտելու XVIII—XIX դդ. հայ-անդիալատի դրական առնչությունները, հայ-եվրոպական գրական կապերը:

АРМЯНСКАЯ КУЛЬТУРА В ПИСЬМАХ БАЙРОНА

АНАИТ БЕКАРЯН

Резюме

В литературном наследии Байрона особое место занимают страницы, посвященные армянам и армянской культуре. Это письма, адресованные Т. Муру и Дж. Меррею, а также арменоведческие исследования Байрона.

Благодаря письмам Байрона английский читатель впервые получил представление о просветительской и научной деятельности Мхптаристов. Из писем Байрона мы также получаем сведения о развитии арменоведения в Западной Европе. Как единственные в своем роде по новизне сообщаемых фактов и их достоверности, письма Байрона обрисовывают процесс развития арменоведения в Западной Европе.

¹⁸ Th. Moore, նշվ. աշխ., էջ 336: